

Գլոբալ ջրային համագործակցություն:

Գլոբալ առանցքային արժեքներ



Այս փաստաթուղթը նկարագրում է Կայուն Ձարգացման 2030թ. Գործողությունների օրակարգի ենթատեսքում Գլոբալ ջրային համագործակցության (ԳՁՀ) ստանձնած ռազմավարական դիրքորոշումը:

ԳՁՀ-ն, օգտագործելով իր գործող բազմաշահառու ցանցի հարաբերական առավելությունը և բազմամակարդակ համագործակցությունների համապարփակ մոտեցումների վերաբերյալ 20-ամյա գիտելիքն ու փորձը, խթանում է ջրի ոլորտին առնչվող Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) և թիրախների իրականացմանը՝ աջակցելով երկրներին հասնել կայուն մարդկային, բնապահպանական և տնտեսական զարգացման:

Մարտահրավերը

Բոլոր մարդիկ, տնտեսությունները և էկոհամակարգերը կախված են ջրից: Մինչդեռ, այն, հաճախ, համարվում է երկնային պարգև, գերշահագործվում և վատ է կառավարվում: Ջրօգտագործման և ջրային ռեսուրսների կառավարման ներկա ձևը երկրագնդի բնակչության հսկայական մասի թողնում է առանց ջրից օգտվելու հնարավորության, և սպառնում է կենսական կարըր նշանակություն ունեցող էկոհամակարգերի ամբողջականությանը: Ջրով ոչ ապահովված լինելը միլիոնավոր մարդկանց չքավորության մեջ է պահում, խոչընդոտում է մարդկության զարգացմանը և խոչընդոտում է տնտեսական աճը:

Բնակչության և տնտեսական աճի, քաղաքաբնակեցման, կոնֆլիկտների և կլիմայական փոփոխության արդյունքում ջրով անապահով լինելու խնդիրը ավելի է բարդանում: Նման միտումները ինչպես մեծացնում են ջրի համար մրցակցությունը և ջրային ռեսուրսները ավելի ռիսկային դարձնում, նույն կերպ ջուրը կարող է հասարակության և աճի համար ռիսկային դառնալ, եթե կայուն չկառավարվի:

2015թ.-ի սեպտեմբերին, ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդաժողովում Կայուն զարգացման մինչև 2030թ.-ի գործողությունների օրակարգը համաձայնեցվել է 193 երկրների կողմից, և ընդունում է այս ուղղվածությունը՝ կոչ անելով «համահասարակական ընդգրկվածության և համագործակցության», որպեսզի զարգացմանն առնչվող մարտահրավերները փոխակերպելի և ընդգրկուն կերպով հաղթահարվեն՝ ձգտելով «ոչինչ բաց չթողնել»: 2030թ.-ի գործունեության օրակարգը կազմված է Կայուն զարգացման 17 նպատակներից և 169 թիրախից: ԿՁՆ-ն փառասիրական են, բաղձալի և միջկապակցված. հաջողության որևէ հնարավորություն ունենալու համար, նրանք պահանջում են գրագետ մոտեցումներ և համագործակցային գործունեություն:

Չքավորության նվազեցումն ու աճը հնարավոր չէ առանց ջրի կառավարման: Կայուն զարգացման 6-րդ նպատակը՝ «ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն», ուղղակիորեն ԳՁՀ-ի գաղափարախոսությունն է արտահայտում: Ջրին առնչվող նպատակը անբաքտեղիորեն կապված և փոխադարձաբար կախված է մյուս նպատակներից, ներառյալ չքավորության նվազեցումը, գենդերային հավասարությունը, կլիման, սնունդը, էներգիան, առողջապահությունը, քաղաքները և էկոհամակարգերը: ԿՁ 6-րդ նպատակը ջրի անվտանգությանը տանող համապատասխան մոտեցմանը ուղղված բարձր մակարդակի քաղաքական հանձնառություն է արտահայտում: 6-րդ նպատակի 5-րդ թիրախը՝ «իրականացնել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում՝ ներառելով անդրասահմանային համագործակցությունը», հայտարարն է այն բանի, որ ԳՁՀ-ի գործընկերները, իրենց բազմազանության մեջ, ընդհանուր բան ունեն: Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՁՌՀԿ) մոտեցման հիմքում ընկած է այն, որ ԳՁՀ-ն օգնել է ջրային ռեսուրսների արդար և արդյունավետ տեղաբաշխման վրա հիմնված առևտրային գործողությունները վերացնելու և համագործակցության կարիքը համաշխարհային որոշումների կայացման մեջ ներդնելու հարցում: Ջրի ընդգրկուն կառավարումը այն բանալին է, որը 6-րդ նպատակի, ինչպես նաև այլ համապատասխան նպատակների և թիրախների շրջանում,

կապում է մի քանի թիրախ, հատկապես 17-րդ նպատակի (իրականացման միջոցները):

Մեր մասին

ԳՋՀ-ն առաջինն է, որ համապարփակ մոտեցումը ստանձնել է, որպես անվատնից ջրով ապահովված աշխարհի ստեղծելու միջոց: Մա ԳՋՀ-ի տեսլականն է և նշված է մեր «2020թ.-ին ընդառաջ» ռազմավարության և արտահայտված է մեր առաքելության մեջ՝ «խթանել ջրային ռեսուրսների կառավարումը կայուն և անաչառ զարգացման համար»:

Ցանց, որը նպատակ ունի

ԳՋՀ-ն 178 երկրից 3000 կազմակերպության հետ բազմոլորտ համագործակցություն ունեցող շահույթ չհետապնդող գլոբալ ցանց է, որը ներառում է կառավարական, մասնավոր և քաղաքացիական հասարակության թիրախային համայնքներ և կազմակերպություններ: Այն բաղկացած է 13 տարածաշրջանային և 85 երկրի ջրային համագործակցություններից, որոնք գործողությունների պլանների և ծրագրերի քաղաքական երկխոսությունների և ներքինից վերև զարգացման համար քաղաքականապես չեզոք հարթակներ են: ԳՋՀ-ը հարում է բազմազանությանն ու ընդգրկունությանը և խթանում է կանանց և երիտասարդների հավասար մասնակցությունը: Այն համայնքներին ձայն է տալիս և խթանում է համապարփակությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը: ԳՋՀ-ն քողարկված հետաքրքրություններ չունի և առևտրային խորհրդատվությանը չի աջակցում:

Վստահելի, թափանցիկ և հաշվետու կազմակերպություն

ԳՋՀ-ի Ցանցը աջակցություն է ստանում Ստոկհոլմում գտնվող միջկառավարական կազմակերպության կողմից (ԳՋՀԿ): Հզոր տարածաշրջանային ներկայացուցչություն ունեցող ղեկավար Խորհուրդը հանդես է գալիս, որպես ԳՋՀԿ-ի ղեկավար մարմին, որպեսզի ուղղորդի Ցանցի և Միջկառավարական կազմակերպության աշխատանքը: Ղեկավարման Խորհրդին աջակցում է քարտուղարությունը, որն ապահովում է իրավական փորձաքննություն, և Գլոբալ Տեխնիկական Խորհուրդը, որն որոշում է Գլոբալ և Ազգային քաղաքական որոշումներ կայացնող մարմիններին տրվող տեղեկությունը: ԳՋՀ-ի կառուցվածքը մոբիլիզացնում է ֆունդերը և սեփական ներդրումները ու հիմնվում դրանց վրա:

Մեր գործունեությունը

Տարբերակիչ կարողություններով համագործակցություն

- Ճկուն և ընդգրկուն ցանց, որը գործում է տարբեր մակարդակներում, վստահություն է ներշնչում և մարդկային ու կառուցվածքային կարողություններ զարգացնում,
- Կառավարությունների և քաղաքացիների միջև կապ է, որը շատ ներկայացուցչությունների և ոլորտների շահառուների հետ խորհրդակցման և համագործակցության համար միջոցներ է տրամադրում:
- Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման փորձի հիման վրա հիմնված որոշումների կայացման համար գլոբալ հասարակական քաղաքական հարթակ է,
- Ջրի կառավարմանը, բարդություններն հաղթահարելուն, տնտեսությունը հավասարակշռելուն, բնության պահպանմանը և սոցիալական զարգացմանը տանող համապարփակ մոտեցումների համար փորձառությունը մշտական ընդգրկող համայնք և գիտելիքների պահոց է:
- Համաշխարհային ճանաչում ունեցող առաջնորդ է, որը վստահելի, անկախ և նորարական գաղափարախոսություն է տարածում:

ԳՋՀ-ն աշխատում է ստեղծել համապարփակ մոտեցման համար խթանիչ մթնոլորտ. բարձր մակարդակի քաղաքական հանձնառություն, փաստերի վրա հիմնված քաղաքականություն և տարատեսակ շահառուների շրջանում հզոր գործընկերներ: ԳՋՀ-ն ունի 3 անկախ ռազմավարական նպատակ՝ Նպատակ 1՝ (Փոփոխության ներդրում քաղաքականություններում և գործնական աշխատանքներում): Նպատակ 2՝ (Ստեղծել և փոխանցել գիտելիք), որը կախված է Նպատակ 3-ից՝ (Հզորացնել համագործակցությունները): ԳՋՀ-ի գեներիին և երիտասարդությանը վերաբերող ռազմավարությունները հատվում են նպատակների հետ և որպեսզի ապահովվեն կանանց հավասար մասնակցությունը և ներսերնդային համագործակցությունը, ԳՋՀ-ի գործընկերները իրենց գիտելիքն են փոխանցում, օգնելու երկրներին՝ զարգանալ և քաղաքականություններ ներդնել, որպես ներդրումների հիմք: Այս նպատակների իրականացման համար մենք պետք է ընդգրկվենք հետևյալ գերընդգրկուն գործողություններում՝

Աջակցություն ազգային զարգացմանը:

ՄԵՂՄԱԳԻՐ

ԳՁՀ-ն աջակցում է կառավարություններին և այլ շահառուների ջրի կառավարման ոլորտային և վերնից ներքև քաղաքականությունից անցնել բոլոր մակարդակներում ջրի կառավարման համապարփակ և մասնակցային ձևի: Մեր բազմաշահառու հարթակները և ծրագրերը՝ քաղաքականություններ և պլաններ մշակելու և իրականացնելու, հաշվետվողականության մեխանիզմները հզորացնելու, կառուցվածքային արդյունավետությունը առավելագույնիս հասցնելու և ֆինանսավորման աղբյուրներն հասանելի դարձնելու միջոց են: Գիտելիքը փոխանցվում է բարելավված կառուցվածքային աշխատանքի համար (մասնավորապես, հարավ-հարավ ուսուցման համար) և սոցիալական կապիտալը կառուցվում է համահասարակական ընդգրկվածության համար, որպեսզի գտնվեն դուրսի լուծումներ դժվար խնդիրների համար: Սոցիալական կապիտալի կառուցվածքների մեջ ներդրումը և տեղեկացումը բարելավում է կառավարումը՝ աջակցելով անդրսահմանային ջրավազանների և ջրային տարածքների պահպանմանը և ջրային ենթակառուցվածքների մեջ մեծաքանակ ներդրումները դարձնում ավելի կայուն:

Ազդեցություն գլոբալ քաղաքականության վրա: Ջրի կառավարումը շարունակականորեն միջազգային համաձայնություն և հանձնառություն է պահանջում: ԳՁՀ-ն, ՄԱԿ-ի համակարգերի, Միջազգային ֆինանսական կառույցների, Աֆրիկական Միության և Տարածաշրջանային Տնտեսական խորհուրդների պես գործընկեր ձեռք բերելով, ազդում է գլոբալ և տարածաշրջանային գործընթացների վրա: ԳՁՀ-ն տարբեր մակարդակներում երկխոսություններ է կազմակերպում և գլոբալ ֆորումներում ջրի վերաբերյալ ձայն է ապահովում: ԳՁՀ-ն տրամադրում է իր գիտելիքները, որպեսզի համաշխարհային առաջնորդների շրջանում խթանի մեկ ընդհանուր գաղափար և ձեռք բերի ջրի հետ կապված ճգնաժամը հաղթահարելու և ռիսկերը կանխարգելելու միջոցների վերաբերյալ համաձայնություն: ԳՁՀ-ն անդրսահմանային գետեր և ստորգետնյա գետավազաններ կիսող երկրներին հրավիրում է ՋՌՀԿ սկզբունքների վրա հիմնված համագործակցության, որին և ԳՁՀ-ն, և իր տեղական գործընկերները կարող են տեխնիկական աջակցություն ցուցաբերել: ԳՁՀ-ի ցանցը ԿՁԼ-ի մշտադիտարկման և գործընթացների վերանայման մեջ խթանում է հասարակության դերը:

Իրականացման խթանում: ԳՁՀԿ-ն իրականացնող գործակալություն չէ: ԳՁՀ-ի ցանցի գործընկերները միասնական ուժերով մշակված պիլոտային

ծրագրերի կամ երրորդ կողմի ծրագրերում մասնակցելու միջոցով կարող են ընդգրկվել իրականացման գործընթացներում: ԳՁՀ-ն օգնում է իր գործընկերներին երկրներում տարբեր մասշտաբների (տարածաշրջանային, անդրսահմանային, ազգային և տեղական) և տարբեր միջավայրերի (քաղաքային և գյուղական) գործընթացների պլանավորման և իրականացման հարցում: ԳՁՀ-ն տարբեր ոլորտների և սոցիալական շերտերի միջև սիներգիա է ստեղծում, որպեսզի ծրագրերը համաձայնեցված և կայուն լինեն: ԳՁՀ-ն աշխատում է տեղական սեփականատերերի հետ, որպեսզի կառուցվածքային միջոցներ զարգացնի երկարաժամկետ փոփոխություններ իրականացնելու համար, որն էլ կտանի ջրի համապարփակ և ընդգրկուն կառավարման:

Մեր ձգտումները

ԳՁՀ-ն ձգտում է ջուրը կենտրոնական դարձնել 2030թ.-ի Աշխատանքային օրակարգում, ինչպես նաև համապատասխան համաձայնագրերում և գործողության շրջանակներում: Տարբեր մակարդակներում ազգային առաջնորդներին օգնում է հասնել այն գաղափարին, որ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարումը հիմքն ու ստանձն է սննդի և էներգիայի անվտանգության, չքավորության նվազեցման, սոցիալական կայունության, աղետների ռիսկերի նվազեցման և խաղաղության հասնելու համար: ԳՁՀ-ն հարում է ջրին առնչվող նպատակների և թիրախների մշակմանը, դրանք համարելով սոցիալական արդարության, տնտեսության բարգավաճման, և բնապահպանական համապարփակության գրավական: Մրա մեջ մտնում է ոչ պետական դերակատարների կայուն դիրքավորումը ջրի

գլոբալ ճարտարագիտության մեջ: Պետական մակարդակով ֆինանսավորումը և տեղական գործընկերների ծառայությունների շահագործումը հաջողության գրավականներն են: Ներդրողների և բիզնես համայնքի հետ համագործակցելով՝ ԳՁՀ-ն կօգնի երկրներին խուսափել այնպիսի անկայուն ճանապարհներից, ինչպես “սկզբում աճեցրու, այնուհետև մաքրի՛ր” սկզբունքն է:



Մեր թիրախակետը

Ջուրը մարդկանց համար է, հետևաբար, մարդկային հարթություն: Մեր թիրախակետում են, հատկապես, չքավոր համայնքները և աղետների ու կոնֆլիկտների արդյունքում տուժողները: Այս թիրախին հասնելու համար ԳՋՀ-ն՝

- Ներդրումներ է կատարում ջրին առնչվող ԿՋՆ-ի և թիրախների իրականացմանը տանող ազգային գործընթացներում: Ջրին առնչվող այլ թիրախների հետ (ներառյալ աղետների ռիսկերի նվազեցումը և Կլիմայի փոփոխության ադապտացիան և մեղմացումը) սիներգիան, տանում է չքավորների և մեկուսացված հասարակության բարօրության,
- Գործընկերներին ժամանակակից գիտելիքներով և կարողություններով է ապահովում, որպեսզի ջրի անվտանգության ապահովման համար միջոցներ ձեռնարկեն:
- Ցուցադրական ծրագրեր է իրականացնում՝ լավագույն գործնական լուծումներն առանձնացնելու և տարածելու համար:
- Երկրների տարածականության, կարողությունների զարգացման, բազմազանության ապահովման և շահառուների ընդգրկման, հաշվետվողական շրջանակների խթանման և ֆինանսական ու կառավարչական աջակցության հզորացմամբ՝ ցանցն առաջինն է :

Գիտակցելով, որ տարբեր պահանջներից և կարողություններից կախված երկրները զարգացման տարբեր կարգավիճակներ ունեն, մենք կենտրոնանում ենք այն ուղղությունների վրա, որտեղ պահանջարկից դատելով, կարող ենք ներդրում ունենալ: ԳՋՀ-ի ներդրման ազդեցությունը պետք է ջրային ռեսուրսների հասանելիությունը ապահովելը լինի, ինչը կհավասարակշռի սոցիալական, տնտեսական և բնապահպանական կարիքները՝ հաշվի առնելով ջրի արժեքային շղթայի երկայնքով առկա կլիմայական ռիսկերը:

2030թ.-ի Գործունեության օրակարգի համաձայն երկրագնդի վրա բոլոր մարդկանց խաղաղության և բարգավաճման համար աշխարհը երբեք ավելի լավ տրամադրված չի եղել: Օրակարգը հստակորեն արտահայտում է, որ ավելի հզոր գլոբալ գործընկերությունը առանցքային է իրականացման համար: ԳՋՀ-ը, հիմնվելով, ջրին առնչվող զարգացման նպատակների իրականացման հարցում երկրներին աջակցելու վերաբերյալ 20 տարվա փորձի վրա, խանդավառությամբ իր ներդրումն է ունենում Կայուն Ջարգացման Գլոբալ Համագործակցության մեջ:



Փետրվար 2016թ.